[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
4	Դեկտեմբեր	2018 թ.		Բ	8727421144
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
29	Նոյեմբեր	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի									
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)		0	2	5	0	8	9	0	6
[9] Անվանումը	ԻՆՈՎԱՑԻՈՆ ԵՎ ՓՈՔՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ Արհեստակցական կազմակերպություն								
[10] Բանկային տվյալները	Հայէկոնոմբանկ Սպանդարյան մ/ճ	N 163048119818							
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Վ.Սարգսյան 26/3 216 սենյ.								
[12] Լրացուցիչ տվյալներ									

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի									
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)		0	2	6	3	1	2	6	3
[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ								
[15] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834							
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5								
[17] Լրացուցիչ տվյալներ									
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն								
	Լիազորագիր	Համար							
		Ամսաթիվ							

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Հ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծանրաքաշությունը	Միավորի գինը	Արժեքը
1	2	3	4	5	6
1	Դատատեխնիկական փորձաքննություն 13138614	հատ	1	60000	60000
Ընդամենը					60000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ SAHAKYAN AREG 2112830449

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

04/12/2018 16:55:52

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կրկնակի դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

05.11.2018թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Հ.Ս.Հարությունյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13138614 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2014թ. ապրիլի 13-ին՝ ժամը 16:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում գտնվող <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածքում, պատասխանատու անձի կողմից աշխատանքի անվտանգության կանոնները ոչ պատշաճ կերպով հրահանգավորելու հետևանքով, վերջինիս հետ պայմանագրային հիմունքներով չափագրումներ իրականացնող <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության աշխատակից Լևոն Դավիթի Հունանյանը <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության 3-րդ մասնաշենքի տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակուց թմբաձև երթիկը կոտրվելու պատճառով ընկել է 3-րդ մասնաշենքի հատակին, որից հետո անգիտակից վիճակում տեղափոխվել է <<1-ին համալսարանական>> հիվանդանոց, որտեղ և մահացել է:

Դեպքի առթիվ 22.04.2014թ. Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 13138614 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերությունը տեղակայված և գործում է Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում: ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 231-Ա որոշմամբ <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածքում ստեղծվել է ազատ տնտեսական գոտի և <<Էյ Ջեյ Էյ ազատ տնտեսական գոտի>> ՓԲ ընկերությունը ճանաչվել է տնտեսական գոտու կազմակերպիչ: 24.01.2014թ. <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության և <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի միջև կնքվել է <<Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր>>, համաձայն որի՝ ի թիվս այլ պարտավորությունների վերջինս պարտավորվել է պատվիրատուին պատկանող Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում գտնվող արտադրամասի շենքում իրականացնել ջեռուցման, սառնամատակարարման, օդամատակարարման, հրդեհաշիջման համակարգերի նախագծային փաստաթղթերի ուսումնասիրության, թվայնացման, ջեռուցման համակարգերի արդիականացման նախագծային աշխատանքներ: Դրանց կատարման համար <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերությանը տրամադրվել է ադմինիստրատիվ մասնաշենքի 3-րդ հարկի ձախ հատվածում տեղակայված աշխատասենյակը: Գծագրական գործառույթների կատարման աշխատանքների իրականացման նպատակով <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի և Լևոն Դավթի Հունանյանի միջև 03.03.2014թ. կնքվել է համապատասխան պայմանագիր, որով վերջինս պարտավորվել է երկամսյա ժամկետում կատարել պատվիրատուի կողմից ներկայացված գրավոր և բանավոր հանձնարարականները:

2014թ. ապրիլի 13-ին՝ ժամը 12:30-ի սահմաններում Լևոն Հունանյանը գտնվել է աշխատավայրում: Ժամը 14:47-ին բջջայինին զանգ է ստացել և խոսելու

նպատակով գլխավոր մասնաշենքի 3-րդ հարկի իրենց հատկավցած աշխատասենյակից դուրս է եկել, այնուհետև միջանցքի պատուհանից դուրս է եկել 3-րդ մասնաշենքի հարթ տանիք, բարձրացել տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակուց թմբաձև երթիկի վրա, այն կոտրվել է և ընկել նույն մասնաշենքի հատակին, ստացած մարմնական վնասվածքներով տեղափոխվել է <<թիվ 1 համալսարանական>> հիվանդանոց, որտեղ մահացել է:

Դժշախտ դեպքի պատճառը, հանգամանքները, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի խախտումները պարզելու նպատակով 25.04.2014թ. նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն:

2015թ. ապրիլի 24-ին ստացվել է դատաշինարարատեխնիակական փորձաքննության թիվ 15531407 եզրակացությունը, համաձայն որի՝

1. Դժբախտ դեպքի պատճառ է հանդիսացել 3-րդ մասնաշենքի տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակուց թմբաձև երթիկի երկշերտ օրգանական ապակիների կոտրվելը, որից հետո Լևոն Դավիթի Հունանյանը 3-րդ մասնաշենքի տանիքից ընկելը հատակին, որը և հանդիսացել է մահվան պատճառ: Իսկ դրան հանգեցնող պայմանների պարզաբանումը տվյալ դեպքում դուրս է շինարար փորձագետի իրավասությունից, քանի որ Լևոն Դավիթի Հունանյանի հետ կատարված դեպքը տեղի չի ունեցել կոնկրետ շինարարական աշխատանքներ իրականացնելիս կամ շինարարական պրոցեսի հետևանքով:

2. Աշխատանքի պաշտանության և անվտանգության տեխնիկայի ինչ կանոններ են խախտվել և ովքեր են հանդիսանում պատասխանատու անձիք տվյալ դեպքի համար հարցի պարզաբանումը դուրս է շինարար փորձագետի իրավասությունից, քանի որ Լևոն Դավիթի Հունանյանի հետ կատարված դեպքը տեղի չի ունեցել կոնկրետ շինարարական աշխատանքներ իրականացնելիս կամ շինարարական պրոցեսի հետևանքով: Սակայն սույնի կապակցությամբ հարկ է նշել այն հանգամանքը, որ համաձայն <<Էյ Զեյ Էլ Հոկդինգ>> ՓԲԸ-ի և <<Զևս ստուդիա>> միջև 2014թ. հունվարի 24-ին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 2.5. կետի՝ Կատարողի աշխատողները Պատվիրատուի տարածքում պարտավոր են անցնել աշխատանքի անվտանգության հրահանգավորում և պահպանել Պատվիրատուի կողմից սահմանված անվտանգության կանոնները: 2014թ. մարտի 31-ին <<Эй Джей Холдинг>> ЗАО-ի գլխավոր ինժիներ՝ Ա.Սիրադեղյանի կողմից հաստատված և անվտանգության ինժիներ՝ Վ. Եգանյանի կողմից ստորագրված <<Водный инструктаж по технике безопасности, охране труда и производсвенной санитарии>> փաստաթուղթի 2.4.1. կետի համաձայն՝ արգելվում է բարձրանալ տանիք և մետաղական կոնստրուկցիաների վրա առանց ադմինիստրացիայի թույլտվության: Բացի այդ, <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի և Լևոն Դավիթի Հունանյանի միջև 2014թ. մարտի 03-ին կնքվել է գծագրության գործառույթների կատարման պայմանագիր, որի 2.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվում է կատարել գծագրական գործառույթներ, 3.2.1. կետի համաձայն՝ կատարողը պարտավոր է գծագրությունները կատարել անձամբ, <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի և <<Զևս ստուդիա>> ՍՊԸ պատվիրատու <<Էյ Զեյ Էլ Հոկդինգ>> ՓԲԸ-ի մինչև 24 հունվարի 2014թ. ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի 2.4 կետով սահմանված վայրում ՀՀ ք. Երևան, Կաշեգործների փ. շ. 70 հասցեում գտնվող գրասենյակային տարածքում: Այսպիսով ստացվում է, որ կատարողը՝ Լ.Հունանյանը պետք է իր աշխատանքը՝

գծագրությունները կատարեր գրասենյակային տարածքում և տանիք բարձրանալու անրաժեշտության դեպքում ունենար <<Էյ Ջեյ Էլ Հոկդինգ>> ՓԲԸ-ի ադմինիստրացիայի թույլտվությունը: Որպիսինը, ինչպես նաև բրոշուրում բերված անվտանգության կանոնների վերաբերյալ պատշաճ հրահանգավորման մասին տվյալները փորձաքննությանը տրամադրված փաստաթղթերում բացակայում են:

3. Փորձաքննությանը տրամադրած նախագծերում երթիկների վրա խաչուկների առկայության վերաբերյալ տվյալներ բացակայում են: Սակայն ըստ 1.464-1 սերիայի տիպային նախագիծի և 22160-76 ГОСТ-ի պահանջների, մետաղական խաչուկներ չի նախատեսվում հետազոտվող երթիկների կառուցման ժամանակ:

4. Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում գտնվող / <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածք/ շինության 3-րդ մասնաշենքի տանիքի որոշ երթիկների վրա առկա, որոշների վրա բացակայող մետաղական խաչուկները, ըստ տիպային նախագծի և ստանդարտների իրենցից կոնստրուկտիվ տար չեն ներկայացնում, ուստի դրանց որոշ երթիկներում տեղադրման, իսկ որոշներում բացակայության պատճառները կարող են լինել բազմակի, որպիսի պայմաններում սույն եզրակացության շրջանակներում հնարավոր չէ ասել թե կոնկրետ տվյալ դեպքում որն է հանդիսացել մետաղական խաչուկների տեղադրման կամ բացակայության պատճառները:

5. Ինչպես նշվեց թիվ 4 հարցի պատասխանում՝ Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում գտնվող / <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածք/ շինության 3-րդ մասնաշենքի տանիքի որոշ երթիկների վրա առկա, որոշների վրա բացակայող մետաղական խաչուկները, ըստ տիպային նախագծի և ստանդարտների իրենցից կոնստրուկտիվ տար չեն ներկայացնում, ուստի դրանց որոշ երթիկներում տեղադրման, իսկ որոշներում բացակայության պատճառները կարող են լինել բազմակի: Սակայն ուսումնասիրելով այդ խաչուկների կոնստրուկտիվ տեսքը և իրենց տեղադրված հատվածը, կարելի է եզրահանգել, որ ամենայն հավանականության խաչուկները տեղադվել են երթիկներին լրացուցիչ ամրություն տալու նկատառումներից ելնելով:

6. Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում գտնվող / <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածք/ շինության մասնաշենքերի տանիքների վրա փռված և տանիքների վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակե թմբաձև երթիկների թմբաձև հատվածի մի մասի փռված սև գույնի /տոլը/՝ գլոնաձև <<Իզոգամ>> նյութը, ըստ տիպային նախագծի և ստանդարտի չպետք է բարձրանար օրգանական ապակիների վրա, այլ այն պետք է իրականացվեր գմբեթների ամրացման հատվածների տակ:

7. Արդյոք, Կաշեգործների 70 հասցեում գտնվող / <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածք/ շինության 3-րդ մասնաշենքերի տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակե թմբաձև երթիկների թմբաձև հատվածի մի մասի վրա փռված սև գույնի նյութը /տոլը/ <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության աշխատակից և շինության տանիքում նաև նախագծային աշխատանքներ կատարող Լևոն Դավիթի Հունանյանի համար կարող էր ստեղծել խափուստիկ վիճակ՝ կարծելու, թե այն պինդ նյութ է, թե ոչ հարցի պարզաբանումը դուրս է շինարար փորձագետի իրավասությունից:

8. <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության կամ <<Զևս ստուդիա>> ԱՊ ընկերության կողմից Լևոն Հունանյանի անվտանգության կանոնների հրահանգավորում կատարելու վերաբերյալ փորձագետներին տրամադրված

<<Ներածական հրահանգման հաշվառման>> N 1, <<Աշխատատեղում աշխատողի անվտանգության տեխնիկայի արտադրական հրահանգման հաշվառման>> թիվ 2-5, ինչպես նաև <<Աշխատատեղում հրահանգավորման մատյան: Անվտանգության և տեխնիկական կանոնների մատյաններում և <<Աշխատանքի պայմանների, ներքին կարգապահական կանոնների, աշխատավայրում աշխատողի աշխատանքը կանոնակարգող այլ իրավական ակտերի իրազեկման>> գրանցամատյանում, չկան կատարված Լևոն Հունանյանի գործունեությանը վերաբերվող համապատասխան անվտանգության կանոնների վերաբերյալ պատշաճ հրահանգավորումների վերաբերյալ գրառումներ:

9. Կաշեգործների 70 հասցեում գտնվող / <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածք/ շինության 3-րդ մասնաշենքերի տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակե թմբաձև երթիկների վտանգավորության վերաբերյալ անվտանգության կանոնների անցկացման մասին թիվ 8 հարցում նշված մատյաններում որևէ գ րառում առկա չէ:

10. Կաշեգործների 70 հասցեում գտնվող <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության թիվ 3 մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքները իրականացվել են առանց անհրաժեշտ շինարարական թույլտվության, այսինքն, առանց ՀՀ քաղաքաշինության բնագավառում գործող նորմատիվային փաստաթղթերին համապատասխան կազմված նախագծի: Այսինքն թիվ 3 մասնաշենքի տանիքի վերանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի բացակայության, պայմաններում չէին կարող դրանք, համաձայն <<Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին>> օրենքի, ենթարկվել տեխնիկական անվտանգության փորձաքննության:

10.06.2015թ. տուժողի իրավահաջորդ Դ.Հունանյանի ներկայացուցիչ Լ.Սիմոնյանը գրավոր միջնորդություն է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին, որով միջնորդել է նշանակել տեխնիկայի անվտանգության դատատեխնիկական և աշխատանքի անվտանգության փորձաքննություն, պատճառաբանելով, որ դատաշինարարատեխնիկական փորձաքննությամբ փորձագետը չի պատասխանել մի շարք հարցերի, քանի որ դուրս է եղել շինարար փորձագետի իրավասությունից:

Նախաքննության ընթացքում նշանակվել է դատատեխնիկական փորձաքննություն և ստացված փորձագետի թիվ 15-1538 եզրակացության համաձայն՝ նկարագրված դեպքի անմիջական պատճառ է հանդիսացել 3-րդ մասնաշենքի տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակուց կառուցված թմբաձև երթիկի երկշերտ օրգանական ապակիների կոտրվելը, որը կատարվել է տուժող Լևոն Հունանյանի կողմից ինքնակամ կերպով գլխավոր մասնաշենքի 3-րդ հարկի միջանցքի պատուհանի՝ 1,2x1,1 մ չափերով բացվող փեղկով անցնելով և 3-րդ մասնաշենքի տանիք բարձրանալու ու երթիկի վրա կանգնելու հետևանքով:

Համաձայն <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲԸ-ի և <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության միջև 2014թ. հունվարի 24-ին կնքված <<Ծառայությունների վճարովի մատուցման>> Պայմանագրի 2.5 կետի՝ Կատարողի՝ /<<Զևս ստուդիա>> ՍՊԸ/ աշխատողները պատվիրատուի՝ /<<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲԸ/ տարածքում պարտավոր են անցնել աշխատանքի անվտանգության հահանգավորում և պահպանել Պատվիրատուի կողմից սահմանված անվտանգության կանոնները:

Տրամադրված քրեական գործում առկա է 2014թ. մարտի 31-ին <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության գլխավոր ինժեներ Ա.Սիրադեղյանի կողմից

հաստատված և անվտանգության ինժեներ Վ.Եգանյանի կողմից ստորագրված <<Անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության և արտադրական սանիտարիայի>> Ներածական հրահանգավորման հրահանգը (բրոշյուրը), որին <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության տնօրեն Հ.Մուրադյանը ծանոթացել է՝ դնելով <<Պարտավորվում ենք հետևել սահմանված կանոններին>> գրառումը և ստորագրել է: Ըստ տրամադրված փաստաթղթերում, մասնավորապես <<էյ Զեյ էյ Հոլդինգ>> ՓԲԸ-ի և <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի աշխատանքի անվտանգության վերաբերյալ հրահանգավորումների անցկացման գրանցամատյաններում բացակայում է Լևոն Հունանյանին համապատասխան հրահանգավորում անց-կացնելու վերաբերյալ գրառումները: <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի տնօրենը չի կատարել և խախտել է իր իսկ կողմից նշված հրահանգին ծանոթանալու մասին ստանձնած պարտավորությունը, երկկողմ կնքված վերը նշված պայմանագրի 2.5. կետի, Լ. Հունանյանի հետ կնքված 2014թ. մարտի 03-ին կնքված «Գծագրության գործառույթների կատարման» ՔԻ Պայմանագրի <<Եզրափակիչ դրույթներ>> 7-րդ գլխի 9.1. և 9.2. կետերի պահանջները՝ Լևոն Հունանյանին, որպես Կատարողի՝ /<<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի ներկայացուցչի/՝ պատշաճ ձևով չի հրահանգավորել տվյալ տարածքում անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության կանոններն, մասնավորապես Հրահանգի 2.4.1. կետի պահանջին, համաձայն որի <<Արգելվում է բարձանալ տանիք և մետաղական կոնստրուկցիաների վրա առանց ադմինիստրացիայի թույլտվության>>: <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի տնօրեն Հ.Մուրադյանը բավարարվել է միայն նշված աշխատանքների կատարման համար ընդգրկված անձանց վերը նշված հրահանգի տեքստը (բրոշյուրը) տալով, չի կատարել տվյալ Հրահագով աշխատակիցներին պատշաճ ձևով աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպումը:

Համաձայն ԳՕՍՏ 12.0.004-90՝ <<Աշխատանքի անվտանգության ուսուցման կամակերպում>> Միջպետական Ստանդարտի 1.3. կետի պահանջի՝ <<Ձեռնարկությունների աշխատակիցների աշխատանքի անվտանգության ժամանակին և պատշաճ ուսուցման ու գիտելիքների ստուգման կազմակերպման պատասխանատվությունը ընդհանուր առմամբ դրվում է կազմակերպության ղեկավարի վրա...>>, իսկ նույն Ստանդարտի 1.4. կետի պահանջով <<Ձեռնարկությունների աշխատակիցների աշխատանքի անվտանգության ուսուցումը պահանջվող ժամանակին կատարելը՝ հսկում է աշխատանքի պաշտ-պանության բաժինը (բյուրո, անվտանգության ինժեներ) կամ որևէ աշխատակից, որի վրա ձեռնարկության ղեկավարի հրամանով դրված է այդ պարտականությունները...>>:

Ըստ նույն Ստանդարտի կազմակերպության, ձեռնարկության աշխատակիցներին աշխատանքի անցնելու առաջին օրվանից (<<էյ Զեյ էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածքում) ընկերության անվտանգության ապահովման պատասխանատու անձի՝ կոնկրետ սույն դեպքում <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի տնօրեն Հ. Մուրադյանի /քանի որ քրեական գործում բացակայում է ընկերության տնօրենի <<Որևէ մեկ այլ անձի վրա աշխատակիցների աշխատանքի անվտանգության ուսուցման կազմակերպման պարտականությունները դնելու մասին>> Հրամանը/ կողմից պետք էր Լևոն Հունանյանին կատարել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանման մասին համապատասխան ձևով պատշաճ հրահանգավորում (աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին), և որի վերաբերյալ պետք էր մատյանում կատարել համապատասխան գրառումներ:

Հաշվի առնելով <<էյ Զեյ էյ Հոլդինգ>> ՓԲԸ-ի և <<Զես ստուդիա>> ՍՊ ընկերության միջև 2014թ. հունվարի 24-ին կնքված <<Ծառայությունների վճարովի մատուցման>> Պայմանագրի 2.5., <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության և Լ.Հունանյանի միջև կնքված 2014թ. մարտի 03-ին կեքված <<Գծագրության գործառույթների կատարման>> ՔԻ Պայմանագրի <<Եզրափակիչ դրույթներ>> 7-րդ գլխի 9.1. և 9.2. կետերի պահանջները, ԳՕՍՏ 12.0.004-90 <<Աշխատաեքի անվտանգության ուսուցման կազմակերպում>> Միջպետական Ստանդարտի 1.3. և 1.4. կետերի դրույթները, կարելի է եզրակացնել, որ <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի տնօրեն Հ.Մուրադյանի կողմից խախտվել են սույն Ստանդարտի 7-րդ <<Աշխատանքի անվտանգության վերաբերյալ հրահանգավորում>> գլխի 7.1. <<Ներածական հրահանգավորում>> և 7.9. <<Կատարված հրահաեգավորումների վերաբերյալ մատյանում համապատասխան գրառումներ կատարելու կարգը>> ենթակետերի պահանջները:

<<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության տնօրեն Հ.Մուրադյանի կողմից վերը նշված խախտումների (ընկերության աշխատակիցներին, մասնավորապես տուժող Լ. Հունանյանին <<էյ Զեյ էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածքում աշխատանքի անվտանգության ուսուցման ոչ պատշաճ կազմակերպում) պատճառական կապի որոշումը տեղի ունեցած դժբախտ դեպքի հետ դուրս է գտնվում սույն փորձաքննությունը կատարող փորձագետի իրավասության շրջանակներից, այն իրավական տեսանկյունով դիտարկելու խնդիր է հաեդիսանում և ենթակա է իրավական գնահատման:

Համաձայն քրեական գործում առկա 2015թ. ապրիլի 24-ի դատաշինարարատեխնիկական փորձաքննության թիվ 15531407 եզրակացության 6-րդ կետի <<Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում գտնվող /<<էյ Զեյ էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տարածք/ շինության մասնաշենքերի տանիքների վրա փռված և տանիքների վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակե թմբաձև երթիկների թմբաձև հատվածի մի մասի փռված սև գույնի /տոլը/ գլոնաձև <<Իզոգամ>> նյութը, ըստ տիպային նախագծի և ստանդարտի չպետք է բարձրանար օրգանական ապակիների վրա, այն պետք է իրականացվեր գմբեթների ամրացման հատվածների տակ>>: Նշված խախտումը չի համարվում անվտանգության տեխնիկայի կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտում, այն հանդիսանում է կառուցապատման շինարարական նորմերի, նախագծի խախտում:

Ինչ վերաբերվում է 3-րդ մասնաշենքի տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանական ապակե թմբաձև երթիկների թմբաձև հատվածի մի մասի վրա փռված սև գույնի /տոլը/ գլոնաձև <<Իզոգամ>> նյութը <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության աշխատակից և շինության տանիքում նաև նախագծային աշխատանքներ կատարող Լևոն Հունանյանի համար կարող էր ստեղծել խափուստիկ վիճակ կարծելու, թե այն պինդ նյութ է, թե ոչ հարցի պարզաբանումը դուրս է սույն փորձաքննությունը կատարող փորձագետի իրավասության շրջանակներից:

14.03.2016 թվականին ''Փորձաքննությունների ազգային բյուրո'' ՊՈԱԿ-ի ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ, փորձագետ Ա.Վ.Բաղեյանը ցուցմունքով հայտնել է, որ թիվ 15-1538 եզրակացության մեջ՝ Լևոն Հունանյանի և ''Զևս ստուդիա'' ՍՊԸ-ի միջև կնքվել է ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագիր, որի համաձայն Լ.Հունանյանի հանդիսացել է կատարող, իսկ ''Զևս ստուդիա'' ՍՊԸ-ն որպես պատվիրատու, իսկ

եզրակացությունում նշված ստանդարտով աշխատանքի անվտանգության ուսուցումը վերաբերվում է աշխատանքային պայմանագրին, որտեղ կողմերից մեկը հանդես է գալիս որպես ''Գործատու'', իսկ մյուս կողմը՝ որպես ''Աշխատող'': Սույն քրեական գործի շրջանակներում պատվիրատուի կողմից բարձրագույն տեխնիկական կրթություն ունեցող անձ՝ կատարողին միայն անվտանգության տեխնիկայի վերաբերյալ բրոշյուրի տրամադրումը բավական է, քանի որ տուժողը բուհում ուսուցանելու տարիներին անցել է համապատասխան դասընթացներ՝ անվտանգության տեխնիկայի վերաբերյալ, ուստի ինքը կարող էր հրահանգավորել ուրիշներին: Ինչ վերաբերվում է եզրակացության մեջ տրված այն մտքին, որ ոչ լիարժեք է հրահանգավորումը իրականացվել, ապա դա նկատի է ունեցվել արտադրական աշխատանքի պրոցեսի ընթացքում աշխատողին կատարվող հրահանգավորմանը: Թիվ 15-1538 եզրակացության հետևությունների բաժնում ''Զևս ստուդիա'' ՍՊ ընկերության տնօրենի կողմից հրահանգավորման վերաբերյալ առկա են խախտումներ, սակայն այդ խախտումները վերաբերվում են արտադրական աշխատանքային պրոցեսի անմիջական մասնակիցներին, քանի ու դժբախտ դեպքը տեղի է ունեցել ոչ թե արտադրական պրոցեսի կամ տուժողի կողմից իր աշխատանքային ֆունկցիոնալ պարտականությունների կատարման ընթացքում, այլ տուժողի կողմից ինքնակամ կերպով պատուհանից տանիք բարձրանակլու հետևանքով, հետևաբար իր կարծիքով ''Զևս ստուդիա'' ՍՊԸ-ի տնօրենի կողմից թիվ 15-1538 եզրակացության մեջ տրված հրահանգավորումների կազմակերպման վերաբերյալ խախտումները չեն գտնվում անմիջական պատճառական կապի մեջ վերը նշված դեպքի հետ:

01.04.2016 թվականին ''Փորձաքննությունների ազգային բյուրո'' ՊՈԱԿ-ի ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ, փորձագետ Ա.Վ.Բաղեյանը լրացուցիչ ցուցմունքով հայտնել է, որ ''Զևս ստուդիա'' ՍՊԸ-ի տնօրենի արարքում հրահանգավորման պատշաճ կազմակերպման հարցում առկա է խախտում, իսկ ինչ վերաբերվում է եզրակացությունում առկա ''Ոչ լիարժեք հրահանգավորում տալը, իրականացնելը'' արտահայտությանը, ապա արտադրական պրոցես կատարող անձանց համար դա համարվում է ''էական'' խախտում, իսկ սույն քրեական գործի շրջանակներում խախտում առկա է, սակայն իր կարծիքով էական նշանակություն չի ունեցել նշված դեպքի համար:

Նկատի ունենալով, որ նշված եզրակացությունը կասկած է հարուցում, փորձագետի եզրակացության և Ա.Վ.Բաղեյանի ցուցմունքներում առկա են մի շարք հակասություններ, իսկ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող որոշ հանգամանքների պարզաբանման, աշխատանքի անվտանգության կանոնների խախտումների պատճառները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ է հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-րդ, 249-րդ և 251-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 13138614 քրեական գործով նշանակել կրկնակի դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Իոնվացիոն և փոքր ձեռնարկությունների աշխատողների արհմիության գլխավոր տեխնիկական տեսուչ՝ Լև Սիսակի Մնացականյանին:

2.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել ներքոհիշյալ հարցը.

ա) որն է նկարագրված դեպքի անմիջական պատճառը և ինչպիսի պայմաններ են դրան հանգեցրել,

Արդյոք՝

- Շինարարական աշխատանքների թույլտվության և նախագծերի բացակայությունը
- Կաշեգործների 70 հասցեում գտնվող ''Էյ-Ջի Էյ Հոլդինգ'' ՓԲ ընկերության 2-րդ մասնաշենքից դեպի 3-րդ մասնաշենքի տանիք տանող ճանապարհ հանդիսացող միջանցիկ պատուհանի առկայությունը:
- Նշված մասնաշենքի տանիքի որոշ երթիկների վրայի խաչուկների բացակայությունը:

բ)Երևան քաղաքի Կաշեգործների 70 հասցեում գտնվող 3-րդ մասնաշենքի տանիքի վրա առկա արևային լուսավորությունը ապահովող օրգանականն ապակե թմբաձև երթիկների մի մասի վրա փռված սև գույնի նյութը /իզոգամը/շինության տանիքում գտնվող անձի համար կարող էր ստեղծել խափուսիկ վիճակ՝ կարծելու համար, թե պինդ նյութ է ոտքի տակ, և նման պայմաններում տանիքը իզոգամով պատելը արդյոք հանդիսացել է անվտանգության տեխնիկայի և աշխատանքի պաշտպանության խախտում, թե ոչ:

գ) համաձայն <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության և <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերում, աշխատանքի անվտանգության ապահովման վերաբերյալ համապատասխան կետեր առկա են, թե ոչ, եթե այո, ապա ավքեր են հանդիսացել աշխատանքի անվտանգության ապահովման պատասխանատու անձինք՝ աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին:

դ)<<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության և <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի պատասխանատու անձանց կողմից Լևոն Հունանյանը ինչպես նաև <<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի մյուս աշխատակիցները աշխատանքի անվտանգության կանոնների մասին հրահանգավորված եղել են թե ոչ, դրանց վերաբերյալ համապատասխան մատյաններում, քարտերում գրառումներ, և ստորագրություններ առկա են թե ոչ

ե)<<Զևս ստուդիա>> ՍՊԸ-ի կողմից շաբաթ-կիրակի օրերին աշխատակիցներին, այդ թվում նաև Լ.Հունանյանին աշխատանքի կանչելու մասին գրավոր հրաման եղել է թե ոչ

զ) աշխատանքի անվտանգության և աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումներ թույլ տրվել են, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի խախտումներ են թույլ տրվել, ովքեր են հանդիսանում պատասխանատու անձինք և թույլ տրված խախտումները ինչ պատճառահետևանքային կապ ունեն դեպքի հետ,

է) Եթե խախտում առկա է, ապա տեխնիկայի անվտանգության հատուկ թե ընդհանուր նորմեր են խախտվել:

ը) Արդյոք <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերությունը 3-րդ մասնաշենքում տարածք /աշխատասենյակ/ հատկացնելով <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերությանը <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲԸ-ի տեխնիկական անվտանգության պատասխանատուները, տեխնիկական անվտանգության ինժեներ Վ.Եգանյանը և գլխավոր ինժեներ Ա.Սիրադեղյանը կատարել են և արդյոք պարտավոր էին կատարել անհրաժեշտ տեխնիկական անվտանգության հրահանգավորում <<Զևս ստուդիա>> ՍՊ ընկերության աշխատակիցների հետ:

թ) Արդյոք Լևոն Հունանյանի դժբախտ դեպքը տեղի է ունեցել <<Էյ Ջեյ Էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության շենք-շինությունների և հարթ տանիքի 2013-2015

թվականների կատարված շինվերանորգման, վերակառուցման, տեխնիկական վերազինման շինարարական աշխատանքների ընթացքում և դրանց հետևանքով:

ժ) Կատարված են արդյոք <<էյ Ջեյ էյ Հոլդինգ>> ՓԲ ընկերության տեխնիկական անվտանգության պատասխանատուների՝ տեխնիկական անվտանգության ինժեներ Վ.Եգանյանի և գլխավոր ինժեներ Ա.Սիրադեղյանի կողմից տեխնիկական անվտանգության կարգերի և նորմերի СНиП պահպանման և կատարման վերաբերյալ գրառումներ: Վարվել են գրանցամատյաններ և նրանցում կատարվել են գրառումներ կատարված շինաշխատանքների ժամանակ և եթե այո, ապա երբ:

ի) <<էյ-Ջի-էյ հոլդինգ>> ՓԲ ընկերությունը դեպքի ժամանակահատվածում կատարել է արդյոք կապիտալ շինվերանորոգման, վերակառուցման, վերազինման, շինաշխատանքներ, թե այո, ապա այդ աշխատանքների կատարման համար համապատասխան նախագծեր, թույլտվություններ, համաձայնեցումներ, նախագիծ-էսքիզներ, Երևանի քաղաքապետարանից և ՀՀ շինարարության նախարարությունից, ապա արդյոք անցել են համապատասխան փորձաքննություն՝ լիցենզավորված փորձագետների, փորձագիտական կենտրոնների կողմից:

լ)Կա արդյոք պատճառահետևանքային կապ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտման և Լ.Հունանյանի հետ տեղի ունեցած դեպքի միջև:

խ) Փորձագետի թիվ 15-1538 եզրակացությունը գիտականորեն հիմնավորված մեթոդիկայի հիմա վրա է կազմվել թե ոչ:

ծ) Խնդրվում է փորձաքննության ընթացքում պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն փորձաքննության ընթացքում դրանց առաջադրումը և պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3. Փորձագետին տրամադրել թիվ 13138614 քրեական գործը:

4.Փորձաքննությանը մասնակից դարձնել տուժողի իրավահաջորդ Դ.Հունանյանին և տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Լ.Սիմոնյանին:

5.Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրանց իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով սահմանված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ **Հ.Ս.Հարությունյան**